

Ո՛վ յոյս դու, յոյս, անկեղծ բարերար,
Աղքատաց և որբոց մըխիթար,
Որուն ձախորդ են գործերն ամէն,
Դու ես նորա, ո՛վ յոյս, ապաւէն:

Թէ թըշուառ բաղդն ըզքեզ զրկէ ամենէ,
Գանձ, բարեկամ, հրճուանք բաժնուին քեզմէ,
Սեւ մութ ամպեր կենացդ երկի՛ք թէ պատեն,
Յոյսն է որ զքեզ կը պաշտպանէ անոնց դէմ:

Երբ Ովկիան ալիքներովն խրոռված,
Ու սիրենայք քաղցըր երգով ցընորած,
Տես նաւապետն մըրըրկաց հետ մաքառել,
Յուսով միայն կ'իշխէ ալեաց դէմ՝ գընել:

Թէ թառամիլ կենացըդ ծառն ըսկըսի,
Ու չորանալ կանաչ ճիւղերըն ետքի,
Դադաղիդ քով յոյսն է յետին պահապան,
Մինչև մարմինդ իջնէ ի մութ գերեզման:

Յոյսը ըլլայ մատաղ սըրտիդ հըրեշտակ,
Մշտադալար ամբողջ կենացըդ պահակ,
Սիրտըդ կրնայ ուղիդ ճամբէն հեռանալ,
Յուսովդ կ'իշխես երկնից գոնիւր բանալ:

Ո՛վ յոյս դու, յոյս, անկեղծ բարերար,
Աղքատաց և որբոց մըխիթար,
Որուն ձախորդ են գործերն ամէն,
Դու ես նորա, ո՛վ յոյս, ապաւէն:

Յովհաննիսէ Կէլլէրդ
հռեզաբացի

Թարգմ. Հ. Ն. Վ. Զիգի

